ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

# „Գենդերային բյուջետավորման ներդրման հնարավորությունների վերաբերյալ առաջարկությունների փաթեթ

Սույն առաջարկությունների փաթեթը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում իրականացվող «Բյուջե բոլորի համար» ծրագրի շրջանակներում:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» Հիմնադրամը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*«Բյուջե բոլորի համար (Budget4All)» ծրագիրն իրականացվում է Գորիսի Կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» Հիմնադրամի կողմից՝ Հայաստանի Սյունիք, Վայոց Ձոր և Տավուշ մարզերում, Վիններ Հայաստան կանանց ռեսուրս կենտրոնների ցանցի 5 անդամ կազմակերպությունների՝ «Մեղրու կանանց Ռեսուրս կենտրոն» ՀԿ-ի, «Կապանի կանանց Ռեսուրս կենտրոն» ՀԿ-ի, «Սիսիանի կանանց Ռեսուրս կենտրոն» Հիմնադրամի, «Եղեգնաձորի կանանց Ռեսուրս կենտրոն» հիմնադրամի և «Իջևանի կանանց Ռեսուրս կենտրոն» հիմնադրամի հետ համագործակցությամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ իրականացվող կոնսորցիումի միջոցով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն»*

*ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհների շրջանակներում: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրամիության կողմից:*

Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել Սյունիքի, Վայոց Ձորի ու Տավուշի մարզերի 10 խոշորացված համայնքների տեղական բյուջեներում և տեղական մակարդակում իրականացվող ծրագրերում երեխաների և գենդերային զգայուն բյուջետավորման արդյունավետ մեխանիզմների մշակմանն ու ներդրմանը, ինչպես բարելավել ՔՀԿ-ների մասնակցության մեխանիզմները ՀՀ պետական բյուջեի վերաբերյալ քննարկումների և հանրայնացման գործընթացներում, ինչպես նաև բարձրացնել նրանց մասնակցությունը այդ մեխանիզմների բարելավման, մշտադիտարկման, ջատագովության գործընթացներում:

Ծրագրի թիրախային համայնքներն են ՀՀ Սյունիքի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերի խոշորացված 10 համայնքները (Մեղրի, Կապան, Գորիս, Տաթև, Տեղ, Սիսիան, Գորհայք, Արենի, Գլաձոր, Բերդ):

Ծրագրի շրջանակներում փորձագիտական խմբի կողմից մշակվել է **„Գենդերային բյուջետավորման ներդրման հնարավորությունների վերաբերյալ առաջարկությունների փաթեթը**, որը քննարկվել է մի շարք հարթակներում: 2019թ. ապրիլի 5-ին Երևանում անցկացվեց Chatham house ձևաչափով առանց հղումների իրավունքի փորձագիտական հանդիպում-քննարկում, որին մասնակցում էին ՏԻՄ համակարգի և գենդերային հարցերով փորձագետներ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման, ՀՀ ֆինանսների նախարարությունների, ՏԻՄ-րի, ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: «Chatam house» ձևաչափով փորձագիտական հանդիպման ժամանակ այն ներկայացվել է և քննարման է դրվել՝ այն ամբողջացնելու նպատակով: Հանդիպման ընթացքում քննարկվեցին հետևյալ հարցերը.

1. Ինչպես ապահովել համապատասխան վերլուծությունների կամ հետազոտությունների իրականացումը, որոնք թույլ կտան վերհանել համայնքի բնակիչների, հատկապես խոցելի խմբերի, իրական կարիքները:

2. Ինչպես ապահովել իրականացվող ծրագրերի ազդեցության/արդյունավետության գնահատումը բնակչության՝ թե կանանց, թե տղամարդկանց, թե երեխաների, և թե այլ խմբերի ներկայացուցիչների վրա:

3. Ինչպես ապահովել բնակչության խոցելի խմբերի **իրական մասնակցությունը** համայնքներում կազմակերպվող բյուջեի վերաբերյալ հանրային քննարկումներին:

4. Ինչպես ներգրավվել փորձագետներին, ՀԿ-ների և ԶԼՄ-ների ներկայացուցիչներին, որպեսզի նրանք **իրական մասնակցություն ունենան** համայնքային բյուջեի և զարգացման ծարգրերի մշակման ու դրանց ընդունման գործընթացներում:

**Ներկայացվեցին և քննարկվեցին հետևյալ առաջարկությունները.**

1. Համայնքում համապատասխան վերլուծությունների և/կամ հետազոտությունների իրականացումը, որոնք թույլ կտան վերհանել համայնքի բնակիչների, հատկապես՝ խոցելի խմբերի, իրական կարիքները, պետք է վերապահել համայնքի սոցիալական աշխատողին: Եվ, որպեսզի համայնքի սոցիալական աշխատողը այդ գործառույթը կարողանա լիարժեք կատարել, անհրաժեշտ է.

- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը. «Սույն հոդվածի 1-ին մասում նշված լիազորությունների իրականացման համար **յուրաքանչյուր 5000 բնակչի հաշվարկով համայնքի աշխատակազմում ստեղծվում է համայնքի սոցիալական աշխատողի առնվազն 1-ական հաստիք**...»:
- «Սոցիալական աջակցության» ՀՀ օրենքի 37-րդ թոդվածի 2-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը. «Տեղական սոցիալական ծրագրերը մշակվում են համայնքի ղեկավարի կողմից, լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի սոցիալական դեպք վարողի մասնագիտական աջակցությամբ՝ գործընթացին **պարտադիր մասնակից դարձնելով, համայնքի սոցիալական աշխատողին**, ինչպես նաև մասնակից դարձնելով համայնքի տարածքում գործող աջակցող ցանցի մասնակիցներին և համայնքի բնակչության ներկայացուցիչներին»:
- Համապատասխան փոփոխություններ մտցնել նաև համայնքի սոցիալական աշխատողի պաշտոնի անձնագրում:
- Համայնքի սոցիալական աշխատողների համար գենդերային թեմատիկայով վերապատրաստումներ կազմակերպել, ապահովել դրանց պարբերականությունը:

2. Բնակչության խոցելի խմբերի ներկայացուցիչների վրա համայնքում իրականացվող ծրագրերի ազդեցության/արդյունավետության գնահատումն ապահովելու համար՝

անհրաժեշտ է մշակել և գործարկել համապատասխան ցուցիչներ պարունակող էլեկտրոնային հավելված:

3. Համայնքների (համայնքապետարանների) համար պետք է մշակել և կիրառկել գենդերային վերլուծության ուղեցույց՝ ապահովելու 5-ամյա զարգացման ծրագրերում (և, առհասարակ, յուրաքանչյուր իրականացվող ծրագրում) գենդերային բաղադրիչի պարտադիր ներառումը:

4. Անհրաժեշտ է նախատեսել սուբվենցիաների քվոտավորում՝ պարտադրել դրանց **առնվազն 10%-ն ուղղորդել խոցելի խմբերից որևէ մեկի կարիքների բավարարմանը**:

5. Որպեսզի հնարավոր լինի ներգրավվել փորձագետներին, ՀԿ-ների և ԶԼՄ-ների ներկայացուցիչներին համայնքային բյուջեի և զարգացման ծրագրերի մշակման ու դրանց ընդունման գործընթացներում, անհրաժեշտ է.

- Նախ, ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրումը ամրագրել օրենքով, այլ ոչ թե Կառավարության որոշումով:
- Երկրորդը, վերանայել ՀՀ պետական բյուջեից համայնքներին տրամադրվող սուբվենցիաների ծրագրային հայտերի քննարկման կարգը՝ **հայտերը քննարկման համար պետք է ներկայացվեն ոչ թե մարզպետարան (կամայական որոշումներից զերծ մնալու համար), այլ անկախ փորձագիտական խմբին**, որն էլ հայտերը քննարկելուց և ամփոփելուց հետո՝ դրանք կներկայացնի համապատասխան ոլորտային պետական կառավարման մարմիններ և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն՝ վերջնական որոշում կայացնելու համար: Քանզի ներկայիս գործող կարգը հակասում է Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի 9-րդ թոդվածի դրույթներին:

Ծրագրի շրջանակներում կազմակերպվել է նաև աշխատանքային հանդիպումներ ՏԻՄ-երի, ՏԿՆ-յան և շահագրգիռ կազմակերպությունների հետ, ընթացքում ներկայացվել է ,,Բյուջե բոլորի համար,, ծրագրի շրջակներում մշակված ,,Գենդերային բյուջետավորման ներդրման հնարավորությունների վերաբերյալ առաջարկությունների փաթեթը :
Ներկայացնում ենք այն հիմնական առաջարկությունները, որոնց ուղղությամբ առաջարկում ենք կազմակերպել Կանանց Օրակարգ՝ «Հասարակական կազմակերպությունների և ԱԺ-ում ներկայացված քաղաքական ուժերի միջև համագործակցության հարթակ՝ հանուն կանանց և

տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների» առաջիկա հանդիպումներից մեկը:

Հիմնական առաջարկություններ .

1. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը. «Սույն հոդվածի 1-ին մասում նշված լիազորությունների իրականացման համար յուրաքանչյուր 5000 բնակչի հաշվարկով համայնքի աշխատակազմում ստեղծվում է համայնքի սոցիալական աշխատողի առնվազն 1-ական հաստիք...»: Այս առաջարկի շնորհիվ հնարավոր կլինի համայնքում համապատասխան վերլուծությունների և/կամ հետազոտությունների իրականացումը, որոնք թույլ կտան վերհանել համայնքի բնակիչների, հատկապես՝ խոցելի խմբերի, իրական կարիքները, կվերապահվի համայնքի սոցիալական աշխատողին:
2. «Սոցիալական աջակցության» ՀՀ օրենքի 37-րդ թոդվածի 2-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը. «Տեղական սոցիալական ծրագրերը մշակվում են համայնքի ղեկավարի կողմից, լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի սոցիալական դեպք վարողի մասնագիտական աջակցությամբ՝ գործընթացին պարտադիր մասնակից դարձնելով, համայնքի սոցիալական աշխատողին, ինչպես նաև մասնակից դարձնելով համայնքի տարածքում գործող աջակցող ցանցի մասնակիցներին և համայնքի բնակչության ներկայացուցիչներին»:
3. Բնակչության խոցելի խմբերի ներկայացուցիչների վրա համայնքում իրականացվող ծրագրերի ազդեցության/արդյունավետության գնահատումն ապահովելու համար՝ անհրաժեշտ է մշակել և գործարկել համապատասխան ցուցիչներ պարունակող էլեկտրոնային հավելված:
4. Համայնքների (համայնքապետարանների) համար պետք է մշակել և կիրառկել գենդերային վերլուծության ուղեցույց՝ ապահովելու 5-ամյա զարգացման ծրագրերում (և, առհասարակ, յուրաքանչյուր իրականացվող ծրագրում) գենդերային բաղադրիչի պարտադիր ներառումը:
5. Անհրաժեշտ է նախատեսել սուբվենցիաների քվոտավորում՝ պարտադրել դրանց առնվազն 10%-ն ուղղորդել խոցելի խմբերից որևէ մեկի կարիքների բավարարմանը:
6. Վերանայել ՀՀ պետական բյուջեից համայնքներին տրամադրվող սուբվենցիաների ծրագրային հայտերի քննարկման կարգը՝ հայտերը քննարկման համար պետք է ներկայացվեն ոչ թե մարզպետարան (կամայական որոշումներից զերծ մնալու համար), այլ անկախ փորձագիտական խմբին, որն էլ հայտերը քննարկելուց և ամփոփելուց հետո՝ դրանք կներկայացնի համապատասխան ոլորտային պետական կառավարման մարմիններ և Հայաստանի Հանրապետության

տարածքային կառավարման նախարարություն՝ վերջնական որոշում կայացնելու համար: Քանզի ներկայիս գործող կարգը հակասում է Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի 9-րդ թոդվածի դրույթներին: